



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



567

96





0003 932 48

22 AUG 2013

21.989

111

4035




# Փ Ի Ղ

## I

Պուր ամենքդ լսած կը լինէք, որ փիղ անու-  
նով կենդանի կայ: Չեզնից ոմանք գուցէ և տեսել  
են ոչ միայն փղի պատկերը, այլ և իսկական—կեն-  
դանի փիղ: Բայց ինչո՞ւ մենք ամենքս փիղ չենք  
տեսել. միթէ այդքան քիչ փիղ կայ աշխարհիս երեսին:  
Պատճառը այն է, որ մեր երկիրը փղի հայրենիքը  
չէ. կենդանիներն էլ ունեն իրանց մայր երկիրը,  
որտեղ նրանք գլխաւորապէս ապրում են և որտե-  
ղից տարածվում ուրիշ երկիրներ: Ուրիշ երկիրներէ  
կենդանիներ մենք տեսնում ենք կամ կենդանաբա-  
նական այգիներում, կամ երբ մեզ մօտ բերում են  
ցոյց տալու—գազանանոցներում: Ահա, ինչու մեզ-  
նից շատերը տեսել են զանազան տեսակ կապիկներ,  
օձեր, թռչուններ, առիւծ, վագր, փիղ և այլն, իսկ  
շատ շատերը դրանցից և ոչ մէկը չեն տեսել: Փղերը  
ապրում են Ասիայի և Աֆրիկայի տաք երկիրներում:  
Փիղը չորքոտանի կենդանիներից ամենամեծը

Дозволено цензурою, Тифдись, 17-го Декабря 1903 г.

և ամենաուժեղն է: Ասիական փղի հրկարութիւնը՝ երկու սաժէն է, բարձրութիւնը մէկ ու կէս սաժէն, իսկ ծանրութիւնը 150—250 փութ և մինչև անգամ աւելի: Այս հսկան շափագանց տղեղ է: Նրա ահագին կլոր գլուխը վերջանում է մի շատ երկար քթով, երեք արշին, որ կնճիթ է կոչվում. փիղը այժմ միակ կենդանին է, որ կնճիթ ունի: Կնճիթը սկզբում հաստ է և ղէպի ծայրը քանի գնում բարակում է: Կնճիթի ծայրին են գտնվում նրա քթածակերը և մի մատաձև շարժուն բան—ցցուածք: Կնճիթով նա հոտ է առնում, շօշափում և պաշտպանվում: Կնճիթը շատ ուրիշ ծառայութիւններ էլ է անում փղին: Նա կնճիթով ձեռք է բերում իւր կերակուրը—պոկում է խոտ և կոտրում ծառի ճիւղեր ուտելու համար: Նա կնճիթով ջուր է վերցնում և ածում բերանը, իսկ մատաձև ցցուածքի օգնութեամբ նա վերցնում է գետնից մինչև անգամ ամենափոքր առարկաներ—օրինակ փող, ասեղ, հացի փշրանք, թուղթ և այլն: Փիղը կարողանում է իւր կնճիթը ամեն կերպ շարժել—կարճացնում է, երկարացնում, ոլորում և բաց անում և մինչև անգամ յետ գցում մէջքի վրայ: Կնճիթը սարսափելի ուժեղ է: Փիղը նրանով արմատախիլ է անում ծառեր, բարձրացնում ամենածանր առարկաներ: Կնճիթի մի հարուածով նա կոտրում է վագրի մէջքը: Փղերը ուրիշ գազանների հետ կուռելիս իրանց կնճիթը սաստիկ պաշտպանում են, պատճառ կնճիթի վնասուելով փիղը զրկվում է իւր ամենաանհրաժեշտ անգամից:



Ասիական փիղ

Չատ զարմանալի են փղի ատամները: Նրա բերանից դուրս են ցցուած վերին ծնօտի երկու ասագին առաջին ատամները և գտնվում են կնճիթի աջ և ձախ կողմերում: Այս ատամները մենք ժանիք ենք անուանում. բայց մի գիտնական ասում է, որ փղը ժանիքներ չունի և դրանք նրա կտրիչ ատամներն են: Այս ատամները անընդհատ աճում են և երկու արշին երկարութիւն և մէկ-երկու փութ ծանրութիւն են ունենում:

Փիղը ուրիշ կենդանիների հետ կռուելիս իւր ժանիքներով պաշտպանվում է: Բոլոր արու փղերը ժանիքներ ունեն, իսկ էգերը մեծ մասամբ չունեն: Փիղը ունի և չորս հատ մեծ-մեծ սեղանատամներ՝ կերակուրը ծամելու համար: Նա այս ատամները հինգ-վեց անգամ փոխում է:

Փղի ականջները նոյնպէս մեծ-մեծ են և կախուած գլխի երկու կողմում: Փիղը ճակատի այս ու այն կողմում ունի մի-մի ծակ, որտեղից ժամանակ առժամանակ դուրս է ծորում մի տեսակ զարշահոտ հեղուկ: Այս հեղուկը ներկում է փղի երեսը մութ գոյնով: Փղի աչքերը անհամեմատ փոքր են, նայելով նրա միւս անգամների մեծութեան:

Փղի վիզը հաստ է և կարճ: Մարմինը ահագին, բարակ պոչը հասնում է մինչև ծնկները և վերջանում կոշտ մազերից կազմուած փնջով:

Ոտերը գերանաձև են—երկար և հաստ: Առաջին ոտերի վրայ կայ հինգ մատ, իսկ յետինների վրայ—չորսը: Մատերը կպած են միմեանց և առան-

ձին-առանձին չեն շարժվում: Մատերի ծայրին կան կճղակներ: Փիղը բազմակճղակ կենդանիների դասակարգին է պատկանում:

Երբ փիղը հանդիստ կանգնած է, մարդ նրա վրայ նայելիս չէ հաւատում, թէ այս հաստ գերանաձև ոտերը կարող են ծալուել, այն ինչ նրանք ծալվում են զարմանալի հեշտութեամբ և առհասարակ փղի բոլոր շարժուածքները թեթև են և ազատ:



Փիղը հաստամորթ կենդանիների թուին է պատկանում, ինչպէս ոնգեղջիւրը, գետաձին, վարազը և մեր ընտանի խոզը: Կաշին գորշագոյն է. նրա վրայ կան ծալքեր և ակօսներ, կաշուի վրայ շատ քիչ մազ կայ: Մազերը համեմատաբար խիտ են միայն աչքերի շուրջը, շրթունքների վրայ ու մէջքի յետին մասում: Մազերը կոշտ են և լինում են սև կամ մուգ-շագանակագոյն: Կան սակայն փղեր, որոնք իրանց մարմնի վրայ ունեն մեծ և փոքր սպիտակ բծեր. սրանք կոչվում են սպիտակ փղեր: Սպիտակ փղերը ապրում են Սիամում (Ասիա):

Ի՞նչ զանազանութիւն կայ Ասիայի և Աֆրիկայի փղերի մէջ: Աֆրիկական փիղը անհամեմատ բարձր է և մեծ: Կիսալուսնի ձևով ահագին ականջները ծածկում են պարանոցը և ուսերը: Ժանիքները նոյնպէս սարսափ են ազդում մարդու իրանց մեծութեամբ: Մէկ սաժէն երկարութիւն ունեն և մինչև 5 1/2 փութ ծանրութիւն: Զանազանութիւն կայ նոյնպէս ոտերի մատերի մէջ: Ասիական փիղը առաջին ոտերի վրայ ունի հինգ մատ, իսկ յետինների վրայ—չորսը, ինչ-

պէս վերը ասացի, աֆրիկական փիղը առաջիններէ վրայ ունի չորս մատ, իսկ յետիններէ վրայ երեքը: Աֆրիկական էգ փղերը մեծ մասամբ ժանիքներ ունեն:

Ասիայում փղերը ապրում են Հնդկաստանում, Հնդկաչինում և Յէյլօն, Սումատրա և Բօրնէօ կղզիներում: Աֆրիկայում՝ Չադ լճից մինչև Նհամա լիճը:

Կարելի է կարծել, թէ մի այսպիսի հսկայական կենդանի, ինչպիսին փիղն է, պէտք է վախենար սարերից և բարձրութիւններից և իւր ապրելու համար պէտք է ընտրէր տափարակ տեղեր, սակայն լեռնային երկիրները հարուստ անտառներով և ջրերով փղի ապրելու սիրելի տեղերն են:



Աֆրիկական փիղ



## II

Հին դարերից ի վեր մարդը աշխատել է օգտուել փղից: Կարթագենացիք, հին պարսիկները և հնդիկները փղերով էին պատերազմ դուրս գալիս: Վարդանանց պատերազմի ժամանակ պարսիկները հայերի դէմ կռուելիս նոյնպէս փղեր ունէին իրանց շարքերում: Կրթուած փիղը հռովմայեցիներին զբարձուիթին էր պատճառում նրանց կրկէսներում:

Ներկայումս մարդը օգտվում է փղից երկու նպատակով: Ասիայում նրանց գլխաւորապէս որսում են և ընտելացնելով գործ են ածում իբր ընտանի կենդանի, իսկ Աֆրիկայում՝ բացառապէս փղոսկր ձեռք բերելու համար, որ նրա ժանիքներն են: Փղոսկրից շինում են զեղեցիկ իրեղէններ, ինչպէս օրհովհարի, հովանոցի, ձեռնափայտի, զանակի կոթեր, սանր, տուփեր, ծխամորճեր և զանազան մանր-մունր իրեր: Այս բոլորը շատ թանգ են գնահատվում՝ փղոսկրի ամբողթեան և սպիտակ զեղեցիկ տեսքի համար: Աֆրիկայում ամեն տարի այս նպատակով սպանում են 40—50 հազար փիղ:

Մարդու սաստիկ հալածանքները չափազանց

պակասցրել են փղերի թիւը աշխարհիս երեսին: Այժմ փիղը վայրենի դրութեան մէջ գտնվում է միայն անմարդաբնակ տեղերում: Որոշ բնակատեղ նրանք չունեն, այլ անընդհատ շրջում են տեղից տեղ, օրական անցնելով մինչև 100 վերստ: Փղի հանդարտ քայլուածքը հաւասար է 4—6 վերստի մէկ ժամում: Երբ հարկը ստիպում է, նա կարող է մէկ ժամում անցնել մինչև 20—25 վերստ: Ճանապարհին երբ պատահում է զետ կամ լիճ, փիղը առանց դժուարանալու լողալով անցնում է ջուրը: Փղերը շատ լաւ լող տալ գիտեն և երկար ժամանակ կարողանում են լողալ: Երբեմն նրանք բոլորովին ընկղմում են ջրի մէջ և միայն կնճիթը դուրս հանում ջրի միջից: Ջուրը անցնելիս մայր փղերը իրանց ձագերին պահում են կնճիթներով, կամ եթէ ձագերը մեծ են, նստեցնում են իրանց մէջքի վրայ և այդպէս անցնում ջուրը:

Փղերը հաւաքական կեանք վարող կենդանիներից են և ապրում են խմբերով: Ամեն մի ընտանիք կազմում է մի խումբ, որ բաղկացած է լինում 20—40 գլխից: Երբեմն մի քանի ընտանիքներ միանում են և կազմում մի անազին խումբ 200—300 գլխից: Խմբի գլխաւորը լինում է մի պառաւ էգ փիղ: Նա լաւ ճանաչում է տեղը, ճանապարհները և այդ պատճառով առաջնորդում է ամբողջ խմբին: Խմբի չուելու ժամանակ առջևից գնում է նրա գլխաւորը — պառաւ էգ փիղը, յետոյ գնում են միւս էգ փղերը իրանց ձագերի հետ, իսկ յետևից ու կողքերից ցիւ

ու ցան զնում են արու փղերը: Վտանգի ժամանակ վերջինները առաջ են վազում, էգերը փակում են գնացքը և պաշտպանում ձագերին յետևից: Վտանգի միջոցին փղերը քաջութեամբ պաշտպանում են միմեանց, մանաւանդ իրանց առաջնորդներին: Ճանապարհին ոչ մի բան արգելք չէ լինում խմբի անցնելուն: Անտառի միջով անցնելիս նրանք կոտորատում են այն ճիւղերը, որ նրանց խանգարում են ազատ անցնել, արմատախիլ են անում փոքրիկ ծառերը և այսպիսով ճանապարհ բացում իրանց համար: Մի անձանօթ տեղով անցնելիս նոր ճանապարհը գցում են այնպէս խելացի կերպով, որ մինչև անգամ ինժեներները զարմանում են նրանց ընտրած յարմար ճանապարհի վրայ:

Հնդկաստանում կան և միայնակեաց փղեր, որ առանձնանում են իրանց խմբերից: Այդ լինում են ծեր արու փղերը:


Փղերը մեծանում են մինչև 25 տարեկան հասակը, իսկ կատարեալ հասունութեան հասնում են 35 տարեկան ժամանակ: Ընտանի փղերը ապրում են 80—100 տարի, իսկ վայրենիները 120 և մինչև անգամ 150 տարի: Փղերը սկսում են ծնել 16 տարեկան հասակից և ամեն 2½ տարին ծնում են մի ձագ, երբեմն երկու: Չագի ծանրութիւնը լինում է 5½ փուլթ: Մայրը վեց ամիս կաթ է տալիս ձագին:

Փիղը խոտակեր կենդանի է. ուտում է խոտ, ծառի տերև, ճիւղեր՝ մարդու կռան հաստութեամբ, կեղև, պտուղներ և բրինձ, որ նրա ամենաօրերի

կերակուրն է: Փիղը սիրում է ուտել և հացաբոյսեր, այդ պատճառով նշանք գիշերները արշաւանք են գործում ցանած արտերի վրայ, բայց բաւական է արտերը թեթև ցանկապատել, կամ մի խրտուիլակ զնել, որ փիղը չմօտենայ արտին: Նա շատ վախենում է ամեն մի տնկած փայտից, ցանկապատից և այլն: Յաճախ այս արշաւանքները գործում են միայնակեաց փղերը, որոնք սովորաբար կատարի են լինում:

Ուտելիս փղերը չեն շտապում, ուտում են հաճոյքով, որ առանց աղմուկի չէ կատարվում: Կոտորատուղ ճիւղերի ճարճատիւնը, նրանց շնչառութիւնը, ծամելը, ծանր քայլուածքը, ականջների թափահարելը, որ կենդանին յաճախ հովանոցի պէս կանգնեցնում է գլխին, հսկայական մարմնի քորելը, հաստ ծառերի բներին քսելով և այս բոլորի հետ փղի խոզովակային թափանցող ձայնը—դժոխային մի աղմուկ է առաջացնում, որ անկարելի է նկարագրել: Տաք եղանակին, երբ միլիօնաւոր ճանճեր տանջում են այս հսկային իրանց խայթոցներով, փիղը կոտորում է մի խտատերև ճիւղ և զբանով քշում ճանճերը: Սա նրան, ի հարկէ, զովացնում էլ է:





III

**Փ**ղի հոտառութիւնը և լսելիքը շատ զարգացած են, այն ինչ տեսողութիւնը թոյլ է: Մի ամենափոքր ձայն, չխկոց բաւական է, որ փիղը ուշադրութիւն դարձնի և զգուշանայ: Հոտը փղերը առնում են շատ հեռուից և ոչ ոք չէ կարող նրանց մօտենալ քամու հոսանքի կողմից:

Փղի ամենալաւ յատկութիւններն են համբերութիւն և հնազանդութիւն: Մարդու մօտ ապրելով ընտանի փղերը դառնում են հասկացող և բանիմաց: Փիղը ունի և լաւ յիշողութիւն:

Հնդկաստանում ընտանի փղերը բազմատեսակ գործեր են կատարում: Նրանց բարձում են 50 մինչև 100 փութ ծանրութիւն, հեծնում են, հերկել են տալիս հողը անգլիական ահագին գութաններով, շարժում են մեքենաներ, դարսում են գերաններ, ընտանի փղերի օգնութեամբ որսում են վայրենի փղեր և այլն: Փղերին կառքի մէջ չեն լծում, այլ նրանց մէջքի վրայ դնում են տնակներ, որի մէջ մարդիկ նստում են իրանց իրեղէններով: Փղապանը նստում է փղի վզին և քշում, միայն կառավարում

է ոչ թէ մտրակով, այլ մուրճով, սրով խփում է նրա գլխին: Փղերը Հնդկաստանում մանաւանդ գնահատելի են հարաւային մեծ դաշտերով անցնելու ժամանակ, միայն նրանք չեն դիմանում կլիմայի և մտունդի փոփոխութեանը:

Ահա, մի փաստ, որ ցոյց է տալիս փղի լաւ յիշողութիւն ունենալը: Մի փիղ, որ երկու տարի ընտանի էր փախաւ: Տասն և հինգ տարուց յետոյ նորից բռնուեց և կրկին յիշեց տիրոջ խօսքերի նշանակութիւնը:

Հնդկական պատերազմի ժամանակ զօրքի մի մասը թնդանօթներ բարձած փղերով մօտեցաւ մի սարի: Հարկաւոր էր գերաններից սանդուղք կազմել սարը բարձրանալու համար: Առաջին փիղը, երբ մօտեցաւ սանդուղքին, նայեց վերև, գլուխը շարժեց, և երբ փղապանը սկսեց յորդորել, որ վեր բարձրանայ, նա խղճալի ձայնով գոռաց: Զգոյշ կենդանին հասկացաւ, որ սանդուղքը ամուր չէ: Երբ մի քանի փոփոխութիւն արին գերանների մէջ, այն ժամանակ փիղը առանց ստիպելու մօտեցաւ, փորձեց կնճիթով առաջին գերանը և յետոյ մեծ զգուշութեամբ ոտը դրեց վրան: Ապա նա ոտքը պէտք է դնէր մի դուրս ցցուած ժայռի վրայ: Նա կնճիթով սեղմեց ժայռը և համոզուելով, որ ամուր է, հետեւեալ քայլն արեց: Երրորդ աստիճանը նորից գերան էր, բայց հէնց առաջին սեղմելուց, գերանը փղին դուր չեկաւ: Չնայելով փղապանի փաղաքշական խօսքերին՝ «սիրելիս», «հոգեակս», «զաւակս» և այլն,

փիղը տեղից չշարժուեց, թէև փղերը շատ են սիրում այս խօսքերը: Վերջապէս պատժի դիմեցին, փիղը գոռաց, բայց մնաց անշարժ: Դարձեալ մի քանի փոփոխութիւններ կատարեցին, փիղը փորձեց և սկսեց զգուշութեամբ բարձրանալ: Երբ նա վերև հասաւ, նրա ուրախութեանը չափ չկար. նա սկսեց փարուել իր տիրոջը և հողը ցրել տալ իր շորս կողմը:

Առաջին փղին պէտք է հետևէր երկրորդը, որ նրանից փոքր էր: Սա մեծ հետաքրքրութեամբ դիտում էր առաջինի բարձրանալը և ամբողջ ժամանակ այնպիսի շարժումներ էր անում ներքև կանգնած, որ կարծես թէ ուզում էր դրանով օգնել նրան: Փոքր փիղը, երբ տեսաւ ընկերոջ անվտանգ տեղ հասնելը, իւր բաւականութիւնը արտայայտեց խոզովակային ձայնով, կարծես շնորհաւորում էր ընկերոջ, բայց երբ հերթը իրան հասաւ, նա կարծես վախեցաւ և գիջեց միայն փղապանի ոյժին: Երբ երկրորդ փիղը հասնում էր վերև, առաջինը ձգեց նրան իր կնճիթը, երկրորդն էլ իր կնճիթով բռնեց նրանից և վեր բարձրացաւ: Այստեղ երկու հսկայական կենդանիները սկսեցին ողջունել միմեանց:

Մի անգլիացի ինժեներ ունէր մի փիղ, որի աչքը սկսեց ցաւել: Փիղը երեք օր բոլորովին ոչինչ չէր տեսնում: Տէրը դիմեց բժշկի: Բժիշկը փորձեց լեպպիսի ջուր, որ գործ են ածում մարդու աչքացաւի դէմ: Փղին հրամայեցին պառկել և աչքի մէջ կաթեցրին այս ջրից: Կենդանին սաստիկ ցաւից գոռաց, բայց

շուտով աչքը լաւացաւ: Յետոյ սկսեց ցաւել միւս աչքը, բժիշկը նորից եկաւ. այս անգամ փիղը ինքը պառկեց, գլուխը թեքեց և առանց ընդիմանալու թոյլ տուաւ բժշկին աչքը դեղ գցել:

Մի նմանօրինակ դէպք էլ պատահեց վերջին հնդկական պատերազմի ժամանակ: Մի փոքրիկ փիղ վերք էր ստացել գլխի վրայ և ցաւից այնպէս էր կատաղել, որ ոչ մի կերպ չէին կարողանում նրա վերքը կապել: Չատ փորձերից յետոյ փղապանը դարձաւ փղի մօրը և նշաններով հասկացրեց, թէ ինչ է պահանջվում: Խելօք կենդանին իսկոյն բռնեց կնճիթով իւր ձագին և բաց շթոցեց, մինչև որ նրա վերքը կապեցին: Այս ծառայութիւնը մայրը անում էր ամեն անգամ, մինչև որ ձագը բոլորովին առողջացաւ:

Մի անգամ Լոնդոնում մի յայտարարութիւն դուրս եկաւ, թէ Լոնդոն է բերուած մի շատ մեծ փիղ: Լոնդոնի թատրոններից մէկի վերատեսուչը մտածեց, որ եթէ նա պիէսի մէջ մտցնի և փիղ, այն ժամանակ ներկայացումը մեծ հասարակութիւն կը գրաւի: Նա գնեց այդ փիղը: Գերասանուհիներից մէկը ներկայացման ժամանակ փղի մէջքին նստած պէտք է անցնէր բեմի վրայ շինած կամուրջով: Հարկաւոր էր այս բանը մի օր առաջ փորձել: Փիղը երբ մօտեցաւ թեթև կերպով շինած կամուրջին, յետ քաշեց ոտը և կանգնեց: Նա զգաց, որ իւր ծանրութեան տակ կամուրջը կը քանդուի. իսկ ներկայացումը կարգադրողը բացատրեց այդ նրա յամառութեամբ և հրամայեց փղին ծեծել: Հսկայ կեն-

1008  
3747

դանին անշարժ կանգնած անտրտունջ տանում էր սաստիկ հարուածները: Նրան խփում էին երկաթի սուր ձողով ականջների մօտ, փափուկ տեղերին: Կենդանու ոտների մօտ արիւնը լիճ էր կազմել: Այդ միջոցին եկաւ մի դերասան Չարլզ Իւնգ: Նա իսկոյն հասկացաւ, թէ ինչու փիղը չէ ցանկանում բարձրանալ կամուրջի վրայ և սկսեց վիճել ներկայացումը կարգադրողի հետ: Վերջինս հրամայեց աւելի ևս խիստ ծեծել փղին. Իւնգը մօտեցաւ խեղճ կենդանուն, սկսեց փայփայել նրան և երբ փղապանը պատրաստվում էր երկաթի ձողով դարձեալ մի հարուած հասցնել կենդանուն, Իւնգը բռնեց նրա ձեռքը: Մինչ նա և փղապանը վիճում էին, թատրոն եկաւ նաւապետ Հէյ, որի շոգենաւով բերել էին Անգլիա այս փղին: Փղի անունը Չէնի էր: Նաւապետը շատ սիրում էր Չէնիին և ճանապարհորդութեան միջոցին յաճախ փայփայում էր նրան և երես տալիս: Նա հետաքրքրուեց, թէ ինչ է պատահել: Դեռ նաւապետին չէին պատմել բանի էութիւնը, կենդանին բռնեց կնճիթով նաւապետի ձեռքը, դրեց իւր արիւնաթաթախ վէրքի վրայ և յետոյ տարաւ դէպի նրա աչքերը: Այս բանը շատ խոր տպաւորութիւն թողեց ամենքի վրայ: Խղճաց և փղին ծեծողը: Նա վագեց փողոց և խնձոր գնեց փղի համար: Չէնին ծուռ-ծուռ նայեց նրա վրայ, առաւ խնձորները, զցեց գետին և կոխտտեց: Չուտով եկաւ Իւնգը, որ նոյնպէս գնացել էր խնձոր բերելու փղի համար: Երբ Իւնգը խնձորը մեկնեց փղին, նա կերաւ բոլոր

խնձորները և յետոյ կնճիթը քնքշութեամբ փաթաթեց նրա մէջքին: Կարծես այս երկու բանով ուզում էր ասել, թէ ինքը յիշում է և չարը և բարին: Ամենքը մնացին զարմացած:

Վաղուց ի վեր մի այսպիսի պատմութիւն է շրջում բերանից բերան, որ ցոյց է տալիս, թէ փիղը վրէժխնդիր բնաւորութիւն ունի: Պատմում են, թէ մի դերձակ ժամանակ առժամանակ հիւրասիրում էր մի փղի այս կամ այն բանով, երբ նա անցնում էր նրա լուսամուտի առաջով: Մի անգամ դերձակը մտածեց կատակ անել: Նա ասեղով ծակեց փղի քիթը: Փիղը գետից վերադառնալիս դերձակի վրայ պղտոր ջուր ածեց և փչացրեց նրա կարը:

Հնդկաստանի մի աւանում տարուայ տաք եղանակին բոլոր ջրհորները ցամաքեցին: Մի մեծ ջրհորի մօտ, որի մէջ դեռ ջուր կար, միշտ հերթի համար կռիւններ էին պատահում: Մի անգամ այս ջրհորին մօտեցան երկու փղապաններ իրանց փղերով: Փղերից մէկը զարմանալի մեծ էր: Փոքր փիղը կնճիթով բերում էր մի աման: Մեծ փիղը, որ աման չունէր, իւր տիրոջ հրամանով խլեց փոքրից նրա ամանը: Փոքր փիղը զգալով, որ ինքը շատ թոյլ է, չփորձեց բացարձակ վրէժ առնել նրանից, բայց նկատվում էր, որ նա սաստիկ վիրաւորուած է: Փղապանները արդէն սկսել էին հայհոյել միմեանց և ծեծվում էլ էին: Փոքր փիղը յարմար բոլէ գտնելով, յարձակուեց մեծ փղի վրայ և գլորեց նրան ջրհորի մէջ: Մեծ դժուարութեամբ փղին ջրհորից հանեցին:



## IV

**Վ**այրենի փղերին որսում և ընտանի են դարձնում հետևեալ կերպով.

Որսորդները անտառի մէջ մի որոշ տեղ ցանկապատում են. յետոյ քշում են այդտեղ վայրենի փղերի հօտը և մուտքը փակում: Վայրենի փղերը տեսնելով, որ թակարդի մէջ ընկան, աշխատում են դուրս գալ նրա միջից, բայց որսորդները թոյլ չեն տալիս: Նրանք վազում են ցանկապատի շուրջը՝ վառած ճիւղեր և ձողեր բռնած և իրանց բարձր աղաղակներով վախեցնում են փղերին: Այս տեսում է այնքան, մինչև որ փղերը ուժասպառ եղած պառկում են թակարդի մէջտեղում: Որսորդներին մնում է կապտել նրանց ոտերը: Բայց երբէք նրանք այդ չէին կարող անել առանց ընտանի փղերի: Ոտերը կապելիս վայրենի փղերը աշխատում են իրանց կնճիթներով բաց անել կապերը, իսկ ընտանի փղերը թոյլ չեն տալիս և իրանց կնճիթներով շարունակ հեռացնում են վայրենիների կնճիթները: Կապտած փղերին որսորդները մի առժամանակ թողնում են անտառում և քաղցած ու ծարաւ պահելով

ուժասպառ են անում նրանց: Յետոյ հարկաւոր է վզակապ հագցնել վայրենի փղերի վզերին և բաց անել ոտերի կապերը, որ նոյնպէս անում են որսորդները ընտանի փղերի օգնութեամբ և միևնոյն ժամանակ պաշտպանվում են երկաթէ սուր ձողերով նրանց հարուածներից:


Վայրենի փղի վզակապը միացնում են երկու ընտանի փղի վզակապերին, վայրենու ոտերից հանում են օղակները և թուկերը և ընտանի փղերը տանում են իրանց նոր ընկերին լողանալու: Յետոյ վղապանը բերում է փղի համար ուտելու համեղ բաներ: Սովորաբար փիղը միայն երեք օրից յետոյ է սկսում բան ուտել: Առհասարակ չեն շտապում նոր բռնած փղին սովբեցնել այս կամ այն գործը կատարել, որովհետև քանի-քանի անգամ պատահել է, որ երբ ստիպել են կենդանուն գործ կատարել, կենդանին վայր է ընկել և սատկել: Հնդիկները ասում են, որ փիղը սատկում է տխրութիւնից:

Հէնց որ վայրենի փիղը հաշտվում է իր նոր փրճակի հետ, սկսում են նրան սովբեցնել գործ կատարել: Այս բանում էլ ընտանի փղերը շատ օգնում են մարդուն: Նրանք օրինակով ցոյց են տալիս, թէ ինչ է պահանջում տէրը: Նրան սովբեցնում են զետնից վերցնել զանազան առարկաներ և տալ իր վրայ նստած վղապանին: Առաջին ամիսները չեն ստիպում ծանր առարկաներ վերցնել, որովհետև նա ուղիղ շարտում է վերև: Բայց փոքր առ փոքր նա սովորում է առարկաները զանազանել: Թեթև բանե-

ըը նա առաջուայ պէս վերև է գցում, իսկ ծանր բաները զգուշութեամբ մօտեցնում է փղապանին: Փոքրիկ սուր առարկաները նա դնում է իւր գլխի վրայ, որ փղապանի համար էլ յարմար լինի վերցնել:


Փղերը սովորում են շատ բազմատեսակ գործեր կատարել և կատարում են շատ կանոնաւոր կերպով: Նրանք անում են այն բոլորը, ինչ որ մեզ մօտ մեր ընտանի կենդանիները: Փիղը սովորում է մինչև անգամ երեխայ պահել: Պատմում են, որ մի հնդիկ սովրեցրել էր իր փղին երեխային նայել, երբ ինքը տանը չէ, և ամեն անգամ, երբ երեխան ուզում է եղել տանից դուրս գալ, փիղը վերցնում է նրան կնճիթով և ներս տանում:

Փայտի գործարաններում փղերը շատ կանոնաւոր կերպով դարսում են գերաններ և տախտակներ:



Գերանի մի ծայրից բռնում է մէկ փիղ, միւրից մի ուրիշ փիղ և տանում դնում են նշանակուած տեղը

և դնում են ուղիղ մէկը միւսի վրայ: Բայց հէնց որ հանգստանալու զանգը խփում է գործարանում, փիղը իսկոյն ևեթ թողնում է իր գործը և ոչ մի ոյժով չէ կարելի նրան աւելի աշխատեցնել:



Աֆրիկայում փղերին կենդանի չեն որսում, այլ սպանում են, որովհետև նրանց գլխաւոր նպատակն է փղոսկր ձեռք բերել: Մէկ փղից ստացվում է մինչև 300 բուբլա փղոսկր և ամեն տարի հազարաւոր փղեր են սպանվում այդ նպատակով: Փղերին սպանում են ծանր հրացաններով, որ լցնում են ահագին սրածայր զնգակներով: Եթէ որսորդը չէ կարողանում սպանել փղին, զրգուած փիղը յարձակվում է նրա վրայ և կնճիթով օղը շարտում և տրորում նրան իր ծանր ոտերով: Այն վայրենի ազգերը, որ ծանօթ չեն հրաձիգ զէնքերի հետ, փղերին սպանում են թիւնաւոր նետերով, նիզակներով և այլն:

Մի քանի հազար տարի սրանից առաջ աշխար-

հիս վրայ ապրում էր մի չափազանց հսկայ կենդանի,  
որ նման էր այժմեան փղին. այդ կենդանին կոչվում  
էր մամօնտ: Նա այժմեան ամենամեծ փղերից էլ  
շատ մեծ էր: Նրա երկար ժանիքները զեպի վեր են  
ցցուած, իսկ մարմինը ամբողջապէս ծածկուած է  
խիտ և երկար մազով, որ հասնում է մինչև ծնկները:

Մամօնտները ապրում էին Սիբիրում, որտեղ  
այժմ սառուցի հաստ շերտի տակ գտնում են նրա  
ոսկրները: Սիբիրում մի անգամ սառուցի տակ գտան  
մի մամօնտ, որի մարմինը բոլորովին չէր փչացել և  
մինչև անգամ պահպանուել էր վրայի մազը:



Վ Ե Ր Զ



*[Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page.]*

« Ազգային գրադարան »  
  
NL0286781

21.989

636.1

S-48